

ՀՀ ըդարարդատության նախարարության նախարար պարոն Ռուստամ Բադալյանին

Քաղաքացի՝ Հարություն Սարոյի Գալենցի կողմից

Էլ. հասցե: archigalentz@gmail.com

Կայքէջ՝ www.galentz-research.org ; www.InteriorDasein.de ; www.wolf-galentz.de

Հեռ.: + 49 179 547 5312 (Բեռլին, Գերմանիա); + 374 9 (0)99 919 818 (Երևան)

ԴԻՄՈՒՄ-ԽՆԴՐԱՆՔ

Հարգելի պարոն Բադալյան,

Հայաստանը միշտ էլ հպարտացել է իր յուրահատուկ մշակույթով: Գալենցների (Կալենցների) գերդաստանը նույնպես իր ուրույն ավանդն ունի հայկական մշակույթի զարգացման մեջ: 2010 թվականից մինչև 2017 թվականը Երևանում գործել է Կալենցների տուն-թանգարանը, որը վեց տարի շարունակ պետական աջակցություն է ստացել: Թանգարանում, որտեղ հազարից ավել մեծագույն արվեստ ներկայացնող՝ մշակութային նմուշներ են գտնվել, սահմանված կարգով թանգարանի գրանցամատյանում (և ընդհանրապես) գրանցված չեն եղել, և մինչև 2017 թվականի հոկտեմբերի 27-ը եղել են մեկ անձի՝ հորս, Սարո Գալենցի սեփականությունը:

Իր անսպասելի մահից հետո կտակ չթողնելով, մշակութային բարձր արժեք ներկայացնող ժառանգության ընդունման գործընթացը մնացել է օրենքի կարգավորմանը: Առընչվելով դատական համակարգի հետ՝ ես հասկացա, որ Հայաստանում օրենքները կամ թերի են կամ չեն գործում:

Ես երբեք չեի դիմի Ձեզ անձնական նամակով, եթե կտավների ժառանգության ընդունման հարցի կարգավորումը երկու տարի շարունակ՝ թե՛ նոտարի, թե՛ ոստիկանության և քննչական մարմինների հետ քննարկելով, և թե՛ դատարանների բոլոր ատյաններով անցնելով, չհայտնվեր փակուղում:

Հասկանալով, որ Հայաստանի համակարգը չի կարողանում տարրական տեխնիկական խնդիրներ լուծել, ինչպիսիք են՝

- նոտարի կողմից ժառանգական զանգված հանդիսացող գույքի գույքագրումը,
- ապահովումը՝ նոտարի մուտքը տուն,
- դատարանների կողմից տեղաշարժելու արգելքի տակ գտնվող արվեստի նմուշների պաշտպանումը ՀՀ ԱՆ ԴԱՀԿԾ կողմից,
- կեղծած ստորագրություն կրող՝ ակնհայտ շինծու փաստաթղթի փորձաքննությունը,
- յուրացման և գողության հաղորդման հիմքով ոչ պրոֆեսիոնալ քննությունը թե՛ ոստիկանությունում, թե՛ քննչական մարմնում, թե՛ դատարանում,

– օրենքի անկատարության հետևանքով երկու տարի է դատարանը չի կարողանում տալ կատարողական թերթ՝ գույքագրում կատարելու համար, քանի որ կարելի է բազմիցս ներկայացնել վճռաբեկ բողոք,
դատական համակարգի աշխատակիցների իսկ հորդորով, ստիպված եմ դիմել Ձեզ: Երկու տարվա ընթացքում խնդրի լուծման փոխարեն, առաջացել են ութ գործեր, որոնցից երկուսը քրեական բնույթ ունեն:

Թե՛ ազգային և թե՛ սփյուռքահայ մամուլն անդրադարձել է այս խնդրին: Տեսե՛ք հետևյալ հղումները՝
Հաղորդումը Հ1 ալիքով – 13.07.2019 <https://galentz-research.org/galentz-lagacy/>
«Առավոտ» թերթի հոդվածը – 21.08.2019 <https://www.aravot.am/2019/08/21/1061605/>
Ֆակտոր TV-ի հաղորդումը – Գերմանալեզու «ADK» ամսագրի հոդվածը – Nr.182 01.03.2019 <https://galentz-research.org/publications/>
Նույն հոդվածի թարգմանությունը անգլերեն՝ ԱՄՆ-ում լույս տեսնող Armenian Mirror Spectator – 4.04.2019 <https://mirrorspectator.com/2019/04/04/the-debate-about-culture-and-the-culture-of-debate/?fbclid=IwAR1cSjsnnvEiGB78tjBzBlC7dnoyGFXCurNkXoW1Vu2I3qkzayjdKNUFUfk>
Նույն հոդվածի թարգմանությունը հայերեն՝ Պրագայի «Օրեր» ամսագրում – 15.06.2019 <http://orer.eu/hy/allcategories-hy-am/72-hy-am/6752-archi-galents-article.html?fbclid=IwAR2QngjLfBdBs4qss-t1c0wssah7OA0SJ58heeE50NHrvwAioahZ6DpjrPs:>

Բոլոր նյութերը, ինչպես նաև քաղաքացիական և քրեական գործերի ընթացքը, հավաքվում և ներկայացվում են հետևյալ վեբ կայքի վրա:
Տեսե՛ք՝ <https://galentz-research.org>

Հարգելի պարոն Նախարար,
Ես Ձեզ չեի դիմի, եթե այս, առաջին հայացքից ժառանգական թվացող խնդիրը կրեր գուտ անհատական կամ սեփականության հետ առնչվող բնույթ: Այս խնդիրը քննություն է դառնում Հայաստանի հետհեղափոխական արդարադատության համակարգի համար: Խնդրում եմ ծանոթանալ գործի հետ և հնարավորության սահմանում ժամանակ հատկացնել՝ իմ և փաստաբանի հետ հանդիպման համար:

Պետական մարմինների խորհրդով՝ իմ Եվրոդատարան դիմելը ես համարում եմ ամոթալի, քանի որ դա կնշանակեր՝ օտարների մոտ քննադատել մեր ազգային համակարգը, նրա կոռուպտացված լինելը, հանցագործությունների լեգիտիմացումը, տարրական տեխնիկական խնդիրներ լուծելու անկարողությունը:

Նամակին կից՝ Ձեզ եմ ուղարկում հետևյալ նյութերը՝
«ADK» ամսագրի հոդվածի, ԱՄՆ-ում լույս տեսնող Armenian Mirror Spectator թերթի պատճենները և Վարչապետ Նիկոլ Փաշինյանին ուղղված նամակը (հունվար 2019թ.), որտեղ մանրամասն ներկայացված է խնդիրն ամբողջությամբ :

Հարգանքներով՝

Հարություն Արչի Գալենց, 05.12.2019